

## ՀԱՅ ԳՐԵՐԻ 1500 ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

### պատասխան Լէօի բաց նամակին

#### 1.

Լէօն աւետարանի այրու դերն է կատարում, ինձ վիճակուել է անիրաւ դատաւորինը: Դեռ հերու ինձ խընդրեց նամակով, և ես խոստացայ, նորից և նորից յիշեցրեց, բայց մինչև այժմ էլ խոստումս չկարողացայ կատարել: Այժմ բաց նամակով է ինձ դիմում («Հորիզոն» № 92) և ես ստիպուած եմ գրիչ առնել ձեռքս, անյարմար դիրքով մօտենալ սեղանին և չնայած ոտքերիս բողբոխ, որ գրելուց ուռչում են և սրտիս մեծ նեղութիւն պատճառով, պարտաւորում եմ ըսցատրութիւններ տալ, թէ ինչու տարիներ առաջ, 1896 թուին մեր այժմեան գործածած, Հայ այբուբենի վերջնական կարգաւորումը Մեսրոպի ձեռքով դնում եմ «յամենայն դէպս 412 թուականից ոչ առաջ»:

Օրաթերթի մէջ գիտական խնդիրների մասին խօսելը ինձ փոքր ինչ վախեցնում է: Կարելի է ձանձրոյթ պատճառել համաշխարհային հարցեր վճռող և հոյակապ ընդհանրացումներով մտազբաղ մտաւորականներին, կամ ընթերցող մեծամասնութեանը դիւրահաս և մատչելի դառնալու ցանկութեամբ՝ շատ հաւանական է, որ կմոռացուին կամ գիտմամբ բաց կթողնուին այնպիսի կէտեր, որոնք անհրաժեշտ էին և ուրիշներին համոզելու համար այն բանին, որին ինքզ համոզուած ես: Ինչ և իցէ: Հպատակուում եմ, զգուշացնելով սակայն, որ այս տողերիս պիտի նայել, ոչ իբրև գրական մշակուած աշխատութեան, այլ իբրև թուրքիկ, միայն շատ կարևորը և անհրաժեշտը պարունակող, կարճ ակնարկների վրայ:

## 2.

Գրի գիւտի տարեթիւը որոշելու համար մեր միակ հեղինակաւոր աղբիւրը Կորիւնն է իբրև ժամանակակից։ Այդ հաշուի միակ յենակէտը՝ Սահակի և Մեսրոպի մահուան թուականներն են։ Այս մասին շատ է գրուած և աւելորդ է այստեղ կրկնութեանց մէջ ընկնել։ Այս խնդրով վերջին զբաղուողը Նորայր Բիւզանդացին է, «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք», Տփղիս 1900, էջ 386—390։ Ամբողջ մի գլուխ՝ «Մտոյգ թուականք մահուան Սրբոյն Սահակայ և Սրբոյն Մաշտոցի» վերնագրով նուիրուած է այս թուականների ճշդելուն, մէջ են բերուած զանազան հեղինակների կարծիքներ՝ Չամչեանինը, Գաթրիճեանինը, Ալիշանինը և ընդ Ուսումնասիրութեան հիմնակէտը, որի վրայ կառուցուած է ամբողջ շինուածքը հետեւեալ տողերն են. «Յաղկերտ Երկրորդ գահակալեց ի 4 Աւդոստոսի 438 տարւոյն, ըստ նորագոյն և ստուգագոյն հաշուոյ Թ. Նէօլտէքէի (Th. Nöldeke). — տես Ստեփանոս Աստղիկ, տպ. Պետերբուրգի. 1885, երես 358. — որով իւր թագաւորութեան առաջին ամն է 438 Աւդոստոս—439 Աւգոստոս. հետեւաբար Սրբոյն Սահակայ վախճանին օրն՝ 7 Սեպտեմբեր (=30 Նաւասարդի) 438, իսկ Սրբոյն Մաշտոցի՝ 17 Փետրուար (13—Մեհեկանի) 439»։ Բայց այս բոլորը տարօրինակ թիւրբիմացութիւն է։ Ես չգիտեմ յարգելի հայկաբանը կարգում է գերմաներէն թէ ոչ, ապա թէ ոչ խորհուրդ կտայի գիմել իսկական Նեօլդըլիէին (Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der Arabischen Chronik des Tabari և այլն. Leyden, 1879, էջ 435 և այլն), որտեղ կգտնէր Ս. Մալխասեանի Աստղիկի հրատարակութեան վերջում մէջ բերուած Սասանեան թագաւորների ցանկի գործածութեան եղանակը։

\*) Տես Բիւզանդացուց շատ առաջ նոյն հետեւանքին հասած պ. Իսահակ Յարութիւնեան՝ «Հայոց գիրը» 1892, Թիֆլիզ, մի օգտակար հաւաքագրական աշխատութիւն, որտեղ ընթերցողը կգտէ շատ աղբիւրներից կազմած մի ժողովածու։

Այդ ինչպիսի խելօք և քննադատներին նեղութիւն չպատճառող թագաւորներ են, որ Արտաշիւր Ա-ից սկսած «զահակալում են» (ինչպէս Բիւզանդացին է ասում) խումբ խումբ վերից վար, ասանց ընդհատման այսպէս՝ սեպտեմբերի 26-ին, 22-ին, 14-ին, 13-ին 9-ին 7-ին, 5-ին Երկրորդ խումբը օգոստոսի՝ 19, 18, 16, 14, 8, 4-ին (մեր Յազկերտ Երկրորդը) Երրորդ խումբը յուլիսի 30 23, 22, 20 և այլն, վերջին խումբը յունիսի, նոյն կարգով 30-ից դէպի յետ մինչև յունիսի 16-ը, որտեղ և վերջանում է Սառանեանների ցանկը:

Փոքր ինչ աւելի ծանօթութիւն պարսկական իրականութեան՝ պիտի համոզէր յարդելի նորայրին, որ այս կանոնաւոր թուերի շարքը չէ կարող գահակալութեան օրեր ցոյց տալ, այլ դրանք բոլորովին նման մեր շարժական տոմարին՝ նաւասարդի օրերն են. Պարսկաստանում, ինչպէս և ուրիշ մի քանի տեղ, սովորութիւն ունէին թագաւորի առաջին տարին հաշուել նաւասարդի 1-ից, թէև թագաւորը ոչ թէ այդ առաջին ամսում, այլ տարուայ վերջին ամսում գահակալած լինէր: Այդ հաշիւը այսպէս ասած, «պաշտօնական» ձև էր և չէր համապատասխանում իսկական իրողութեան: Եւ իսկապէս՝ նեօլոքիէն և նրանից առնելով Մալխասեանը դնում են՝ բացի նաւասարդի 1-ը ցոյց տուող սիւնեակից՝ նորից երկու ուրիշ սիւնեակ «ստոյգ սկիզբն թագաւորութեան», «ստոյգ վախճան թագաւորութեան» տիտղոսով: Ահա այդ սիւնեակներում պիտի որոնէր և նորայրը մեզ հետաքրքրող Յազկերտ Երկրորդի գահակալութեան տարին: Բայց այդ ստոյգ գահակալութեան տարին (Wirklicher Regierungsantritt ցոյց տուող սիւնեակը դատարկ է մինչև վեցերորդ դար, մինչև Խոսրով Ա. Անաշքուան, ինչպէս կարող է նորայրը հաւաստիանալ իրեն մատչելի Ասողիկի յաւելումից, եւ պատճառը պարզ է, որովհետև նեօլոքիէն չէ ունեցել «ստոյգ» թուականներ: Ուրեմն և հիմնովին պիտի հերքուած համարել նորայրի հաւաստածը, թէ «Յազկերտ գահակալեց ի 4 աւգոստոսի 438 և այլն»: Կործանուում է և այդ հիմքի վրայ մեծ խնամով կառուցուած շէնքը:

## 3.

Ուրեմն նեօլոգը կէից ունեցած թուերով խնդիրը մնում է առկախ, Յազկերտ առաջինի իսկական և ստոյգ գահակալութեան ոչ միայն օրը այլ և տարին անորոշ: Այդ կարող է պատահած լինել և 438-ին և 439-ին: Սահակի մահուան օրը (30 նաւասարգի, առաջին տարի Յազկերտ երկրորդի) ճշտիւ որոշելու համար բարեբախտաբար Հայ մատենագրութեան մէջ ունինք և մի ուրիշ տուեալ, այն է օրուայ շաբաթակերպ այսինքն ինչ օր լինելը: Այդ աղբիւրն է Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ Հայրապետին և Մեօրովբայ վարդապետին, Սոփերք, Բ: Անշուշտ այդ գրութիւնը շատ հին չէ. յամենայն դէպս յետոյ գրուած Խորենացու պատմութիւնից, որից և օգտուում է: Ունեցել է և մեզ անձանօթ աղբիւնբու: Այս գրութեան մէջ պահուած է Սահակի մահուան օրը՝ Հինգշաբթի, «[Ս. Սահակ] առ Քրիստոս վերափոխի ի նաւասարգի յերեսունն յաւուր հինգշաբաթուջ, որ և զճնունդ սրբոյն ի նմին աւուր ասեն եղեալս: Ով հասկանում է պատմական թուերի գործածութեան շատ բարդ մանրազննին ուշագրութեան կարօտ հաշիւները՝ նա միայն կարող է ըմբռնել այսպիսի ըստ երևութին չնչին տուեալի կարևորութիւնը: Միմիայն այս «հինգշաբթին» մեզ հնարաւորութիւն է տալիս ճշտիւ որոշելու Սահակի մահուան բուն տարին: Եւ այդ արդէն վաղուց կատարուած է: Տես Dulaurier, Recherches sur la Chronologie Arménienne, էջ 134, ծանօթ. 40:

Սահակի մահուան թուականն է 439, 7 սեպտեմբերի, հինգշաբթի, իսկ Մաշտոցինը՝ 440, 17 փետրուարի, շաբաթ:

Այս ճիշդ թուերը խախտելու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Այս թուերն են գործածում բոլոր տոմարագէտ գրողները, Ալիշան և ուրիշներ: Այս հաշիւը համաձայն է և նեօլոգը կէի վարպետ, հմտալից ուսումնասիրութեանը, որ Յազկերտի առաջին տարին դնում է 438/59 թուին, այսինքն Յազկերտի գահակալութեան օրը պիտի որոնել 438 և 439

Թուականների մէջ (տ. Tabari 422 էջ և հետ.) հարկաւ պայմանով, որ նեօլոգը կէին գլխի վայր չբացատրենք.

Ապահովութեան համար վերստուգենք Դիւլորիէի դեռ 1859 թուին, կատարած հաշիւը: Չնայելով որ Դիւլորիէն Յազկերտի առաջին տարին դնում է փոքր ինչ ուշ. 439—440, աչքի առաջ ունի և Խորենացու ընթերցուածը (փոխանակ «առաջինի»՝ «երկրորդ» տարի Յազկերտի և 440—441 թուականները), այսու ամենայնիւ ուղիղ հետևանք է ստանում, միմիայն շնորհիւ օրոսան (հինգշաբթի): 436-ից, մինչև 439 inclusivement՝ հայ նաւասարդի 1-ը ընկնում է օգոստոսի 9-ին: Ուրեմն և Մահակի ծննդեան օրը—նաւասարդ 30 այդ շորս տարիների որում և պատահէր՝ պիտի ընկնէր սեպտեմբերի 7-ին (23 օր օգոստոսից և 7 օր սեպտեմբերից—30): Նեօլոգը կէի հմուտ հաշուից ապահով ենք, որ Յազկերտի գահակալութեան առաջին օրը կամ 438-ին է կամ 439-ին: Մնում է մեզ քննել, թէ ո՞ր տարում սեպտեմբերի 7-ը ընկնում է հինգշաբթի: 436-ին սեպտեմ. 7-ը ընկնում է երկուշաբթի, 437-ին երեքշաբթի, 438-ին՝ չորեքշաբթի, 439-ին՝ հինգշաբթի, 440-ին (նահանջի պատճառով) շաբաթ, 441-ին կիրակի և այլն և այլն. կամ աւելի ճիշտ՝ 440-ին հայ ամիսը նորից մի օր յետ է ընկնում և նաւասարդի 30-ը գալիս է սեպտ. 6-ին. իսկ սեպտ. 6-ը 440-ին ընկնում է՝ ուրբաթ, 441-ին շաբաթ 442-ին կիրակի և այլն: Ուրեմն ոչ մի հինգշաբթի այս և այն կողմը, բացի 439-ից, որ մեր գործին գարս Ուրեմն Սոփերքում պահուած «հինգշաբթին» պատահական բան չէ, բղխում է վաւերական հին ազբիւրից և լիովին արդարանում է նեօլոգը կէի բոլորովին ուրիշ ազբիւրներից (Ագաթիաս, ասորի Եղիա, Յակոբ Եգիսացի և այլն) հանած և զբաղացութեամբ:

## 4.

Կորիւնից հաստատ գիտենք, որ գրի գիւտից մինչև Մաշտոցի մահուան օրը անցել էր 35 տարի:

Գործադրելով տառացի այս հաշիւը՝ գրի գիւտը տեղի

է ունեցել 405 թուին մեհեկանի 13-ին, որ համապատասխանում է տարուայ 193-դ օրուանը, Այդ տարում նաւասարդի 1-ը ընկնում է օգոստոսի 17-ին, ուրեմն, ամեն մէկը կարող է հաշուել և գանձել, որ մեհեկանի 13-ը՝ փետրուարի 25-ին է, և իսկապէս գրի գիւտի և Մաշտոցի մահուան միջև 8 ամիողջ քառամեակ կայ, ուստի և մահուան փետրուարի 17-ը պիտի գրի գիւտի տարում լինէր՝ փետր. 25 ( $17 + 8 = 25$ ),

Ուրեմն նիւթը հաւուեյարդարումից ստացուած գրի գիւտի թուականն է 405 փետր. 25:

Հարկաւ ստիեստութիւն կլինէր պնդել, որ ճիշդ այս օրն է կատարուած գրի գիւտը. կամ այլ խօսքով՝ Մաշտոցը գրի գիւտից մինչև մահուան օրը ապրել է ուղիղ 35 տարի, ոչ աւել և ոչ պակաս: Կորիւնի օրով էլ մարդիկ հարկաւ մեզ նման կլոր թուերով էին խօսում և այդ 35 թուից ամբողջ ամիսներ, նաև թերևս կէս տարուց աւել, այս կամ այն կողմը պիտի թերուել իրական ուղիղը գտնելու համար:

Բայց հաշուեյարդարումից ստացուած թիւը կարևոր է նրանով, որ հնարաւորութիւն է տալիս նուազագոյնը ընտրել անխօսափելի սխալներից և այսպիսի, ինչպէս Նեօլդրկէն է անուանում — Rechnungsmässig — թուերով է կազմուած Սասնեան թագաւորների ցանկը: Սրանից 10 տարի առաջ, երբ Ս. Մալխասեանի գեղեցիկ նախաձեռնութեամբ գրի գիւտի յօրելեանի առթիւ ձեռնարկեցինք Պատմագրերի նոր հրատարակութեան 2-երի բաղդատութեամբ, ես նոյն այս կարծիքիս էի, բայց ոչ մի առարկութիւն չհանեցի 404 ընդունուած թուականի դէմ, համարելով իմ կողմից այդպիսի վարձուելը անտեղի և գործ խանգարող: 404-ը կամ ինչպէս ուրիշներն են հաշուում 406-ը մօտաւորապէս ճիշտ են և իրականից ոչ շատ հեռու, թէև ոչ «կանոնական» թիւ: \*

\* Ծան. բոլորովին մի կողմն եմ թողել, այս յօդուածը գրելիս, վերջերս Ա.մ.ս. Հանդիսում տպուող յայտնի կրիտիկոս Մարկուարտի գրութիւնը. «Պատմ. հայ. նշանագրերու և վարուց

## 5.

Այժմ գալիս ենք խնդրի գլխաւոր հանգոյցին: Գրի գիւտի պատճառով իւր տեւական գործողութիւն է: Ի՞նչ մոմենտն էին համարում նախնիք, յատկապէս հինգերորդ գարում, այդ գործողութեան սկիզբը. որից և հաշոււմ էին այդ գիւտի տարիները: Կորիւնը շատ պարզ ասում է «Եւ դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի [Առաջնոյ] առեալ սկիզբն» որից և հաշոււմ է Մաշտոցի վերջին գործնէութեան 35 տարիները, Յազկերտ Առաջինի գահակալութեան թուականը ճշդուած չէ: Պատկանեան Իւստին և ուրիշները գնում են 397-ին, ուրեմն և նրա ութերորդ տարին լրիւ համապատասխանում է մեր սրոշած 405 թուականին: Նեօլոգիկէն փոքր ինչ աւելի ուշ է գնում՝ 399-ի օգոստոսի 14-ին (—նաւասարդի մէկ) սկսող պարսկական տարում, այսինքն տարուայ որ և է ամսում, շունենալով գահակալութեան ստոյգ ժամանակը:

Այս թուին յարմարելու համար Բիւզանդացին Կորիւնի ութը առաջադրում է կարգաւ վեց (ը և զ տառերի շփոթութիւն), որ հարկաւ շատ լաւ հնարաւոր է: Մեզ համար կարևորն այն է, որ սկզբնակէտը, որից հաշոււմ է Կորիւն հայ դպրութեան տարիները՝ Դանիէլեան տառերի Վաղարշապատ քերուելու եւ Վրամշապուհի թագաւորու-

ս. Մաշտոցի»: Այս տարուայ համարներից իմ ձեռքս են հասել միայն Յունուար և Ապրիլ համարները, իսկ Փետրուարն և Մարտը էջմիածնում ոչ ոք չէ ստացել: Մարկուարտի գրութիւնը ինձ ընդունելի հիմք չէ տալիս որ և է փոփոխութիւն մտցնելու իմ ուրուագծածի մէջ: Զգիտեմ սիվ է արտասահմանից ստացուած հայ հրատարակութիւնների գրաքննիչը: Սակայն ստիպուած եմ նրա ուշադրութիւնն հրաւիրել այն բանի վրայ, որ Ամս. Հանդիսի, որ լոկ գիտական թերթ է, համարները գրեթէ կիսով չափ կորչում են (անցեալ և այս տարի): Մինչդեռ չեն կորչում օտար լեզուներով (ֆրանս. գերմ. անգղերէն) ստացուածներից և ոչ մի համար: Ում մեղադրել և ինչով բացատրել՝ չգիտեմ: КОМИТЕТЬ ПО ДѢЛАМЪ ПЕЧАТИ հաստատութեան պարտքն է պարզել այս խնդիրը և վերջ դնել այս անկարգութեան:

Թեան հինգերորդ տարիներն են, այն է ինչպէս տեսանք 405-ը:

Նոյնպէս է հաշուում և Փարպեցին: Յիշելով Մաշտոցի կրօնական գործնէութիւնը՝ պատմում է թէ ինչպէս Վառաձապուհի հինգերորդ տարին գալիս է նա Սահակ կաթողիկոսի և Վառաձապուհ թագաւորի մօտ գրի հոգսը քաշելու, և երբ Հարէլի ձեռքով ստացում են Դանիէլեան գրերը՝ «Ուրախ լինէին, և այսպէս դիպեալ զիւտի նշանագրացն՝ ձեռն ի գործ արկանէր երանելին Մաշտոց» և Սահակի օգնութեամբ կատարելագործում է և լրացնում Փարպեցին բոլորովին զանց է առնում գրել Մաշտոցի Ասորիք գնալը, այնտեղ նոր գրեր գտնելը և այլն: Այստեղ էլ մեզ համար կարևորն այն է, որ Փարպեցին էլ գրի զիւտ ասելով հասկանում է Դանիէլեան գրերի Վաղարշապատ բերուելը:

Եւ իսկպէս՝ առանց նախառեալ կարծիքի և ուշադիր հետազօտողը, ինձ թւում է, թէ անհրաժեշտօրէն պիտի գայ այդ եզրակացութեան, ինչպէս ներքևի հաշուից էլ պիտի տեսնենք: Մինչև այժմս ճիշտ հակառակն է տեղի ունեցել, այդ 405-ին (կամ 404) գրել են Մեսրոպեան տառերի գիւտը, այսինքն այն գլխաւոր մտնեալը, որ մեզ հետաքրքրում է գլխաւորապէս: Եւ ի հարկէ դրա գլխաւոր պատճառը մեր ձեռքն հասած բնագրերի խանդար գրութիւնն էր: Բայց 1902-ին (Արարատ, էջ 542—549) ինձ յաջողուեց վերջնականապէս դուրս ձգել Փարպեցու միջից՝ գրի զիւտին վերաբերեալ կասկածելի մի մեծ հատուած, որով խնդիրը աւելի ևս պարզուեց: Ինձ թւում է, որ այս կէտումն էլ նոյն սխալն է տեղի ունեցել, ինչ որ Հայ թուականի վերաբերութեամբ (տ. մեր հրատ. Ագաթ. յառաջաբան էջ ԾԳ.) թուականի սկզբնակէտը (552 Փրկչ. թ.) և տասնեակ տարիներ յետոյ տոմարի կազմուելն ու պաշտօնապէս ընդունուելը շփոթուել են և ամբողջ մեր պատմութեան ժամանակագրութիւնը խանդարել, որ հազիւ ուրեմն վերջին տասնամեակների նորագիւտ բնագրերով և նորանոր հետազօտութեամբ հնար եղաւ ուղղել: Նոյնն է և գրի զիւտի

մասին: Այդ գործի սկիզբն է Գանիէլեան գրերի Վաղարշապատ բերուելը 405-ին, բայց Մաշտոցի ստեղծած տառերի գիւտը, կամ ասենք կատարելագործութիւնը, Ասորիքում, տեղի ունեցաւ շատ աւելի ուշ: Այս խնդրին էլ մի ակնարկ ձգենք հետեւելով քայլ առ քայլ կորիւնին:

## 6.

Վաւաճապուհի հինգերորդ տարին, ինչպէս տեսանք 405-ին մերձաւորապէս, հարէլը թագաւորին բերեց Գանիէլի գրերը. «իսկ արքային\* հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի հարելէն, ուրախ լինէին: Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտ խնդրելին, հայցէին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցենս Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային՝ ապա հրաման տայր ամենայն ուրեք նովիմք կըրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ վարուք Երանելին հասանէր: Եւ իբրև ամս երկուս՝ կարգեալ զվարդապետութիւն իւր՝ նովին նշանագրովք տանէր:»

Ուրեմն իրանց որոնածը անսպասելի կերպով գտնելով (—յանկարծագիւտ խնդրելի), մատաղ մանուկներ են ժողովում՝ գրագիտութիւն ուսուցանելու համար: Եւ երբ որ շատերն են սովորում՝ հրաման է տալիս թագաւորը ամեն տեղ նոյն գրերով ուսուցանելու Մաշտոցն էլ երկու տարի իւր վարդապետութիւնն՝ այդ նշանագրերովն է սովորեցնում: — «Իսկ իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց զբարութեանց քաղեալք և յարուցեալք ղիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ:»

\* Վկայութիւնները բերում եմ ձեռագրերի ուսումնասիրութեամբ իմ վերակազմած բնագրից: Տպագրից եղած իրական տարբերութիւնները ընդգծում եմ: Տեղ տեղ փոխում եմ և տպագրի կէտաղբութիւնը:

Եւ երբ որ վերահասու եղան, որ այդ նշանագրերը անկարող են հայ լեզուի «վանկերն ու կապերը» ճիշդ արտայայտել, մանաւանդ որ այդ նշագրերը ուրիշ լեզուներին էին քաղուած կամ առնուած, ուստի նորից հոգսի մէջ ընկան մի առ ժամանակ, և ելք էին որոնում:

Վերջապէս Վոսմշապուհի...երորդ\* տարին, դժբախտաբար տարեթիւը խանգարուած է, Մաշտոցը ճանապարհ է ընկնում մի խումբ աշակերտներով Ասորիք, աշխարհագրական դիրքից դատելով, անշուշտ առաջ հասնում է Ամիգ, այժմեան Դիարբեքիւր, և յետոյ՝ Եգեսիա—Ուրհա—Ուրֆա, որ շատ աւելի հեռու է: Ամիգում եպիսկոպոս էր այդ ժամանակ Ակակը, իսկ Եգեսիայում «Բարիլասը», որոնցից և Մաշտոցը լաւ ընդունելութիւն է գտնում: Այս եպիսկոպոսների անունը ամենալաւ յեմման կէտն է Մաշտոցի ճանապարհորդութեան ժամանակը որոշելու համար: Դեռ Չամչեանը Խորենացու ձեռագրերից գիտէր, որ Եգեսիայի եպիսկոպոսը «Բարիլաս» է կոչուում կամ «Բարոս»: Սէն Մարտէնն առաջարկեց կարգալ Բարուլաս, որովհետեւ հինգերորդ դարի առաջին կիսում շատ յայտնի է Բարուլաս եպիսկոպոսը, բայց «Բարեւլաս» անունով եպիսկոպոս այդ ժամանակ Եգեսիայում չկար: Հայ գրերով և կամ Կորիւնով զբաղուողներից ոմանք ընդունում են Բարուլաս ձևը, ոմանք ոչ, առանց սակայն դրանից հանելու պէտք եղած եզրակացութիւնը, Թէ իրօք Բարուլաս ձևն է եղել նախապէս Կորիւնում, այդ բանին համոզեց ինձ Խորենացու ձեռագրերի ուսումնասիրութիւնը, որտեղ գտնում են «ի Բարոսէ, ի ր...ոսէ».—ի րարս սէ և մէկում (n<sup>o</sup> 611 գ. ց.) նախապէս «ի Բարիղոսէ» յետոյ նոյն գրչով ուղղած «ի Բարիղոսէ»: Ուրեմն ոչ լոկ հաւանական ենթադրութիւն, այլ իբրև դրական փաստ պէտք է ընդունել, որ Խորենացին իւր Կորիւնում ունէր Բարիլոս կամ սրան մօտ մի

\* Գրուած է «հինգերորդ», որ անհնարին է, վերևում տեսանք, որ տարիներ առաջ արդէն Դանիէլի գրերն ստանալու ժամանակ Վոսմշապուհի հինգերորդ տարին էր:

ձև և ոչ Բաբելլաս: Բաբելլաս սրբի և եպիսկոպոսի անունը շատ ընտանի էր հայ գրիչներին, իսկ Բաբելլաս կամ Բաբուլասը բոլորովին խորթ և անսովոր, մանաւանդ վերջին գարեբուս: Բ և Բ տառերի շփոթութիւնը շատ սովորական է, ընթերցողը թող յիշէ նոյն Խորենացուց Ղերութնտ փոխանակ Ղերութնա ուղիղ ձեին:

Ակակիոսի և մանաւանդ Բաբուլասի կեանքը և գործերը բարեբախտաբար մեզ լաւ յայտնի են ասորական մատենագրութիւնից: Մնուած կեն-նեշրի՞նու, ընդունեց քրիտոնէութիւն, բաժանուեց կնոջից, բոլոր կարողութիւնը բաժանեց աղքատներին և Մաշտոցի նման մտաւ վանականների կարգը: Բաբուլասը քրմի որդի էր, մայրը քրիտոնեայ: Եղեսիայի Դիոնանէս եպիսկոպոսի մահից յետոյ՝ նրան յաջորդ ընտրուեց 412 թուին: 431-ին ներկայ է եղել Եղեսիայում՝ կրօնական ժողովին, խիստ հալածել է նեստորականներին, այրելով նոյն իսկ նրանց գլուխները, ունեցել է ընդարձակ գրական գործնէութիւն, թէև քիչ բան հասած մեզ, մեռել է 435 թուի օգոստոսին: Սոա և Ակակիոսի կեանքի ուսումնասիրութիւնը շատ հետաքրքիր համեմատութեան գծեր են տալիս Մաշտոցի կենսագրութեան համար: Մեզ համար այս բոլորից կարևորն այն է, որ 412 թուից առաջ շէր կարող պատահել Բաբուլաս եպիսկոպոսի եւ Մաշտոցի հանդիպումը Եղեսիայում: Բայց այդ հարկաւ կարող էր պատահել և 412-ից յետոյ:

## 7.

Հետևենք նորից Կորիւնին: Մաշտոցը Եղեսիա աշակերտներին երկու խմբի է բաժանում. մի խումբը Եղեսիայում ասորերէնի դպրութեան է տալիս, իսկ միւս խումբը Եղեսիայից ուղարկում է Սամոսատ քաղաքը յունարէնի վարժուելու: Սամոսատը Եղեսիայից ոչ շատ հեռու արևմտահիւսիս, Եփրատի աջ ափին է: Ինքը Մաշտոցը դեռ Եղեսիայումն է, և ահա այս քաղաքումն է տեղի ունենում Մեսրոպեան գրերի գիւտը, ընկ այնպէս բազում

աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց  
օճան ինչ գտանելոյ, որում եւ պարգեւէր իսկ վիճակ յա-  
մենաշնորհն (կամ յամենաշնորհօղէն) Աստուծոյ հայրական  
չափուն ծնանել ծնունդ՝ նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն  
իւրով՝ նշանագիրս հայերէն լեզուին եւ անդէն վաղվա-  
ղակի նշանագրեալ և անուանագրեալ (կամ նշանակեալ  
անուանեալ) և կարգեալ, յօրինէր սեղօրայիք և կապօք  
և ձայնատուր նշանօք (կամ նշանակօք): Եւ ապա հրա-  
ժարեալ յեպիսկոպոսացն սրբօց՝ հանդերձ օգնականօքն  
իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց, և այլն: Ուրեմն  
Մաշտօց Եղեսիայում նոր և սքանչելի ծնունդն (Մեսրոպ-  
եան գրեր) ունենալուց յետոյ է գնում Սամոսատ, ուր և  
Հռոփանոս ճարտար գրչի օգնութեամբ կատարելագործու-  
թիւններ է մտցնում իւր գիւտի մէջ, երբով զամենայն  
ընտրութիւնս նշանագրացն (կամ նշանագրոյն)՝ զնորբա-  
գոյնն եւ զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն  
և զկրկնաւորն (կամ զկրկնայարն) յօրինեալ և յանկու-  
ցեալ, ի թարգմանութիւն դառնային...» Այսպիսով Սա-  
մոսատն էլ իւր բաժինն ունի Մեսրոպեան գրի գիւտի մէջ,  
և անշուշտ ոչ աննշան բաժին: Թարգմանութիւնն սկսում  
է Առակաց գրքից՝ «Իմաստութիւն և խրատ ճանաչել և  
իմանալ հանճարի բաներ»: Որի առաջին օրինակը գրուեց  
Հռոփանոսի ձեռքով, պատրաստելով միանգամայն և հայ  
ուսանողներից նոր գրերով գրողներ, «հանդերձ ուսուցա-  
նելով մանկունս գրիչս նմին գպրութեան»: Այս բոլորի հա-  
մար բաւական երկար ժամանակ էր հարկաւոր:

## 8.

Վերջապէս հասնելով մտադրուած նպատակին՝ Մաշտօ-  
ցը բոլոր իւրայիններն հետո՝ միասին Սամոսատից վերադառ-  
նում է Եղեսիա, Ամիգ, և այդ քաղաքների իւր նախածանօթ  
եպիսկոպոսներից էլ «աւետագիր» թղթեր առնելով դէպի  
հայրենիք է ճանապարհ ընկնում և հասնում է նոր քաղաք—  
Վաղարշապատ Վռամշապուհի... վեցերորդ տարին: Ահա նս-

րից մի կասկածելի թիւ Բայց այս «վեցերորդ» ընթերցուածը շատ հին է և դժուար է փոփոխել կամ ջնջել: Բարուլասի եպիսկոպոսութեան տարեթիւը պահանջում է, որ այստեղ լինի անպայման տասնաւոր թուական: Եւ միակ հաւանականն է առանց վեցը ջնջելու աւելացնել միայն մի տառ և կարգաւ ԺԶ—16—վեշտասան: Այդպիսի մի սրբագրութիւն դեռ Չամչեանն է առաջարկել, թէ և նրա հայ գրի ամբողջ ժամանակագրական կառուցուածքը անընդունելի է: Միւս կողմից վեշտասանը բոլորովին տեղին է Վառաձապուհի համար, որի մահը հարկադրաբար շատ հեռու չպիտի լինի այդ թուականից: Տեսանք, որ Վառաձապուհի թագաւորութեան սկիզբը ընկնում է մտաւորապէս հինգերորդ դարի սկզբին, նրա հինգերորդ տարին 405-ին, ուրեմն 16-րդ տարին՝ 416-ին կամ առ առաւելն մի կէս տարի առաջ, իսկ մահը նոյնպէս ոչ շատ հեռու այդ թուից: Վառաձապուհից յետոյ կրկին անգամ թագաւորում է Հայաստանում Խոսրով 8 ամիս (Փարպ. 18), յետոյ Սասանեան Շապուհ, որի մահը յամենայն դէպս 420 թուականից այն կողմը չենք կարող տանել: Այսպիսով բոլորովին ապահով է դառնում այս ԺԶ (16) ընթերցուած: Ինչ յաջողուեց գտնել Կորիւնի մեծ հատուածներ երկու բաւական հին ճառքներում (n<sup>o</sup> 681, n<sup>o</sup> 672 գ. ց. տես դրանց մասին Ագաթանգեղոսի յառաջաբան, էջ ԽԵ—ԽԷ) որոնցից մէկում ճիշտ այս «վեցերորդ» բառի առաջ տողի մէջ դատարկ տեղ է թողել ուշագիւր գրիչը, որով և հաստատում է, որ իսկապէս «վեցը» պակասաւոր թիւ է և պիտի ուղղուի ԺԶ—վեշտասան:

Առանց աւելի մանրամասնութեանց մէջ մտնելու՝ Մաշտոցի Ասորիքում գործնէութիւնը դնում եմ 412 մարտ—416 մարտ, մի քառամեակ, երբ հայ նաւասարգի 1-ը ընկնում է օգոստոսի 15-ին: Հայ տարու սկզբից չեմ հաշուում, այլ նահանջից նահանջ, պատճառաբանութիւնը թողնելով ուրիշ տեղի:

Այդ քառամեակում իրողութիւնները դասաւորուած են հետեւեալ շարքով՝

1. Մաշտոցը մեծ պատուով ընդունում է Բաբուլառեայի սկիսկոպոսից Եղեւսիայում:

2. Հետո տարած աշակերտները երկու խումբ է բաժանում, մի խումբը թողնում է Եղեւսիայում՝ ասորերէնի պարագելու, միւս խումբը Սամսատ է ուղարկում (— գումարէր-տես Նորայրի գեղեցիկ բացատրութիւնը «Քննասէր» պրակ Ա. էջ 12—17) յունարէնով զբաղուելու:

3. Եղեւսիայում Մաշտոցը գտնում է իւր գրերը, որոնք արդեօք բարձրագոյն նոր էին, թէ Դանիէլեան գրերի կատարելագործուած ձևափոխութիւն, այդ չընենք: Բայց տեսանք վերևում իմ մէջ բերած մի նորագիւտ ընթացումից, որ Մեսրոպեան տառերը «ձայնատուր նշաններ, կամ նշանակներ» ունէին, որոնցից երեւի զօրով էին Դանիէլեան գրերը:

4. Մեսրոպեան գրի գիւտից յետոյ միայն՝ Մաշտոցը ճանապարհ է ընկնում Սամսատ և այդ քաղաքում՝ Հոսփանոսի օգնութեամբ նորից դասաւորում է իւր գրերը, անշուշտ ինչ ինչ փոփոխութիւններ անելով, և ձեռնարկում է Առակաց գրքի թարգմանութեան, որի Հոսփանոսի ձեռքով գրուած օրինակով և իւր աշակերտներից պատրաստած՝ նոր տառերով գրույններով, շարժման մերայինների հետ վերագտնում է Վաղարշտպատ 416 թուին:

## 9.

### Ամփոփենք ասածներս:

Չեմ ընդունում, որ 405-ը (կամ ինչպէս ուրիշներին հաճելի է՝ 404, 406) Մեսրոպեան տառերի գիւտի թուականն է: Այդ միմիայն Դանիէլեան տառերի Վաղարշտպատ բերուելու թուականն է և սկիզբն հայ տառերի գիւտի աշխատութիւնների, ուրեմն և իրաւամբ՝ ընդհանրապէս գրի գիւտի սկզբնաւորութիւն համարուած:

Բաբուլառի հետ Մաշտոցի հանդիպումը Եղեւսիայում 412-ին էր ամենականութեամբ Բաբուլառի սկիսկոպոսութեան առաջին տարին սկսուած է՝ 411 սեպտ.—412 սեպտեմ-

բերի միջև ընկած, (ասորական տարի) մի որ և է ամսից, որը մեզ անձանօթ է: Այդ թուականից առաջ, մեր ունեցած տեղեկութիւնների հիման վրայ, անհնար է դնել Մեսրոպեան տառերի գիւտը: Թերևս այդ գիւտը ասորական հետեւեալ տարումն է (412 սեպտեմ. — 413 սեպտ.), բայց հաւանօրէն ոչ դրանից աւելի ուշ, որովհետեւ ժամանակ պիտի թողնել և Սամոսատում կատարուած Մաշտոցի գործնէութեանը, որի մասին խօսեցանք արդէն:

Աւրեմն ստանում ենք հետեւեալ ժամանակագրական թուերը:

Սահակի մահը 439-ին, սեպտ. 7. հինգշաբթի.

Մաշտոցի մահը 440-ին, փետր. 17. շաբաթ.

Գրի գիւտի սկիզբը. այն է՝ Դանիէլեան գրերի Վաղարշապատ բերուելը, Մաշտոցի մահից 35 տարի առաջ, «405 թ. 25 փետր.»

Մաշտոցի հանգիստումը Բաբուլաս եպիսկոպոսի հետ Եդեսիայում ոչ կանուխ 412 թուականից:

Մաշտոցի վերագարձը Եդեսիայից՝ 416-ից ոչ ուշ:

412—416 քառամեակը բուն Մեսրոպեան տառերի գիւտի և կատարելագործութեան ժամանակն էր: Այդ քառամեակի սկզբներին է ընկնում Մեսրոպեան տառերի գիւտը:

Վառձապուհը գեռ կենդանի էր երբ Մաշտոցը Ասորիքից վերագարձու, և նրա թագաւորութեան 16-դ տարին էր, որ դարի սկզբից հաշուելով, 415—416 թուականին է ընկնում ձօտաւորապէս, դրանից յետոյ պիտի բաւական միջոց ունենալ տեղաւորելու համար Վառձապուհի մահը. Խոսրովի կարճատեւ թագաւորութիւնը և Շապուհ Սասանեանի քառամեայ (ըստ Խորենացու) իշխանութիւնը՝ մինչև 420, (հմտ. Նեօլդըկէ):

10.

Ինձ համար շատ հասկանալի է, որ այսպիսի մի թեթեւ ուրուագծով անհնար է բոլորովին խախտել մինչև

այժմս իբրև հաստատուն ընդունուած թուերը և համա-  
մոզումները: Մեծ է իներցիայի ոյժը և անշուշտ կունե-  
նամ ընդդիմախօսներ: Այդպիսիները քանի շատ այնքան  
լաւ: Իմ ըմբռնումով Գրի գիւտը երկար տեւական տքնու-  
թիւնների արդիւնք է: Առնուազն 12 տարի քաշեց այդ  
աշխատանքը՝ 405-ից մինչև 416, 412-ին, կամ այս թուին  
շատ մօտ է ընկնում այն կարևոր մօմենտը՝ երբ Մաշտոց  
եղեսիայում, Ասորական գիտութեան կենդրոնում, կատա-  
րեց իւր մտաւոր ճնորոգ և հրաշալի ծնունդը, որ ահա-  
գին նշանակութիւն պիտի ունենար ոչ միայն Հայերի, այլ  
և մեր դրակից և ցեղակից ժողովուրդների՝ Վրացիների և  
Աղուանների համար:

Գալուս Տէր Մկրտչեան

7 Մայիս.

